

ՄԵՆԿ

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կես տարվան 6 ռուբլի.
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция «Мшакъ».
կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տ է Լ է Ֆ օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերէն).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.
Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպեկ.
Տ է Լ է Ֆ օ Ն № 253.

ԲՈՎԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Ո՞ր են ձեր հիմունքները. — ՆԵՐՔԻՆ ՏԵ-
ՍՈՒԹԻՒՆ. Մատու. Քահանայական ժողովը.
Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.
ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտասահմանեան
լրագիրների կարծիքը անգլո-գերմանական հա-
մաձայնութեան մասին. Արտաքին լուրեր.
— ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՕՍԵՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.
— ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Մարդագէտը.

Ո՞Ր ԵՆ ՁԵՐ ՀԻՄՆԱԳՐՈՒՆԵՐԸ

Մեր թեմական դպրոցների փոփոխված
կանոնադրութիւնը դեռ շատ խոսեցնել
կը տայ իր մասին: Առ այժմ որոշ կերպով
փոխվել է հոգաբարձութիւն կազմելու ձևը.
անշուշտ վաղը—միւս օր, կը փոխվեն
կանոնադրութեան եւ միւս յօդուած-
ները:

Իրապէս փոխված պէտք է համարել
կանոնադրութեան եւ այն յօդուածները,
որոնք վերաբերում են կրօնական առար-
կաների դասաւանդութեան: Կանոնադրու-
թեամբ այդ առարկաների դասաւանդու-
թեան հոգը ծանրացած է թէ թեմա-
կան առաջնորդի եւ թէ հոգաբարձութեան
միջոցով, սակայն թեմական առաջնորդը, օգու-
ղիով այն յօդուածից, որ ասում է, թէ
կրօնագէտ ուսուցիչների նախնական ընտ-
րութիւնը պատկանում է առաջնորդին,
բողոքով իր ձեռքն է վերցրել այդ առար-
կաների վերաբերեալ ամբողջ վերահասու-
թիւնը: Այդպիսով կանոնադրութեան այդ
մասը իրապէս փոփոխված է եւ հոգաբար-
ձութիւնները թէեւ բողոքել են այդ հան-
գամանքի դէմ, բայց չեն հասցրել իրանց
բողոքը սուր արտայայտութեան:

Սակայն մի բնական հարց է առաջ դա-
նալ: Մի՞թէ դպրոցի կանոնադրութիւնը
կարելի է փոխել թեմի կերպով, այս կամ
այն տրամադրութեան եւ պատահական
հոգիների ազդեցութեան տակ: մի՞թէ այդ-
տեղ չը կայ մի որոշ դասակարգ եւ սահմանա-
փակող կարգ: Մի՞թէ դա կարող է կամա-
յականութեան ենթակայ մի առարկայ լի-
նել:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԱՐԳԱԳԵԼԸ

(Պատկեր)

I

Հայրս մեռաւ. գիւղում այնպէս հեղու են մեռ-
նում մարդիկ: Մի օր դաշտից վերադարձաւ,
ուսից բարձր դէն ձգեց, քէֆս լաւ չի, կնիկս
առաց մօրս ու պառկեց: Նոյն գիշերը տաքաց-
րեց, հազաց, հազաց մինչեւ լոյս: Լուսաբացին
մայրս դռնէ դուռ ընկաւ, մի երկու հարեանի
ձայն տուեց, եկան, հաւաքվեցին, հարց ու
փորձ արին, փափաքով խօսեցին, յետոյ փոր-
ձեցին քրտնեցնել հիւանդին, բայց չը յաջող-
վեց. երկու օր յետոյ հայրս մեռաւ առանց
բժշկի, առանց դեղի:

Հարեաններն ասում էին՝ թէ «սաթարձա-
մից» *) մեռաւ եւ մի հայտնի ձեռով էին ա-
նուր այդ, կարծես այդ անգամանքը կարող էր
մեզ միմիայն իր թէ սաթարձամից կամ մի
ուրիշ հիւանդութեանց մեռնելը մի եւ նոյն
ցաւը չի պատճառում անտէր անօգնական միա-
ցած ընտանիքին: Բայց կարծեմ արանով նրանք
ուզում էին ասել, թէ սաթարձամից մի անբու-
ժելի ցաւ է, եւ այդ ցաւն ունենալուց յետոյ
պէտք է անարտունձք մեռնել:
Մեր կորուստի բոլոր սարսափը եւ այն ժա-
մանակ միայն գագաթի, երբ մայրս ինձ ու քե-
րու, Մովսիսին, գրկից մօտեցրեց հօրս դիակին
եւ արցունքի միջից դառն ձայնով ասաց՝ «իմ
խեղճ, իմ անտէր եղբորս»:

*) Գիւղերում սաթարձամ է կոչվում թոքերի բոր-
բոքումը:

Մենք երբեք չենք պաշտպանել եւ այ-
ստեհեաւ էլ չենք պաշտպանի այն միտքը,
թէ դպրոցական եւ ուրիշ վարչական բնա-
ւորութիւն կրող հիմնարկութիւնների կա-
նոնադրութիւնները պէտք է դատապարտ-
ված լինեն անշարժութեան եւ անձեռնմխե-
լիութեան: Ոչ: Ընդհակառակը մենք միշտ
բարոյել ենք բարեփոխութիւն եւ առա-
ջադիմութիւն: Բայց մի եւ նոյն ժամանակ
մենք միշտ պահանջել ենք, որ առաջինը
հիմնարկութիւնների մէջ հաստատ պահ-
պանված լինեն ժողովրդական ոգին եւ
ընտրողական լայն կազմակերպութիւնը եւ
երկրորդ, որ կանոնադրութիւնները ծրա-
դրելու կամ նրանց փոփոխելու խնդիրները
ենթարկվեն հրապարակական քննադատու-
թեան եւ որոշվեն ժողովրդական տարրերի
մասնակցութեամբ:

Ի՞նչպէս է ստեղծվել Ներսիսեան դպ-
րոցի կանոնադրութիւնը, որ գոյութիւն
ունի 1861 թվականից ի վեր: Ահա ինչ է
ասում պատմութիւնը: Մատթէոս կաթո-
ղիկոսի 1859 թվ. հոկտեմբերի 4-ին
արձակած յատուկ կոնգրակով Քիֆլիսի հայ
ժողովրդից ընտրվեցին տասն պատգամա-
ւոր, որոնք պէտք է ընկնէին դպրոցին վե-
րաբերեալ խնդիրները: Պատգա-
մաւորները որոշեցին մշակել դպրոցի կա-
նոնադրութեան մի ծրագիր, որը եւ վեր-
ջացրին աջողութեամբ: Այնուհետեւ վեց
հոգեւ ընտրվեցին մի յատուկ պատգամա-
ւորութիւն ձանապարհվեց դէպի Էջմիա-
ր, որն էլ ներկայացրեց թիֆլիսյան կա-
նոնադրութեան հիմնական կետերը: Այս-
թիվով ընտրվեց այդ կէտերը եւ նրանց
վրա հիւսնց ամբողջ կանոնադրութիւնը,
որ սկսեց գործադրվել 1861 թվականից:

Եւ ահա այդպէս՝ այդ կանոնադրութիւ-
նը մշակվել է ժողովրդական ներկայացու-
ցիչների անմիջական մասնակցութեամբ,
այն ժամանակվայ հայ մտաւոր գործող-
ների հետ խորհրդակցութեամբ: Այդ փաս-
տից պէտք էր հետեցնել, որ այդ կանո-
նադրութեան հիմնական կետերի փոփո-
խութիւնները եւ անկարելի է այլ կերպ կա-
տարել, քան դարձեալ նոյն ժողովրդա-

կան ներկայացուցիչների մասնակցութեամբ:
Դպրոցի կանոնադրութեան որոշ խմբա-
գրութեան հետ կապված են շատ կողմնա-
կի խնդիրներ: Այդ կանոնադրութեան հիմ-
նական կետերի անխախտութեան յոյսով
շատերը կտանք են արել եւ մտադիր
էին կտանքներով դուրսնել թողնել: Մտա-
ծել էք արեւօք ձեր արած քայլերի վրա
եւ կշռել էք ձեր հակասական կարգադրու-
թիւնների նշանակութիւնը: Իսկ եթէ
կարողանայիք հեռուոր դադարի կազմել
այն թիւրիմացութիւնների մասին, որոնց
դուք առաջ էք բերել ժողովրդական սկզբ-
բունքը ոտնակոխ անելով եւ մանկավար-
ժական ու վարչական գործերի մէջ ուժե-
ղացնելով թեմական էլիտանութեան միջա-
մտութիւնները եւ կամայականութեամբ
դուք անշուշտ ձեռք կը վերցնէիք ձեր յե-
տադիմական բեֆօրիսերից:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՄՈՒՆ

Վենետիկի Միսիթարեան տպարանը, որ մի
ամբողջ դարից աւել է, ինչ հայկական առաջին
տպարանի փառքն է վայելում, լայն հանց
«Պատկերազարդ Բազմավէպ» անունով մի չքեղ
հրատարակութիւն, որից ստացված արդիւնքը
յատկացրված է թիւերով արեւմտեան հրատա-
րութեան ճակատին խոշոր տառերով գրված է
«Որբունի», իսկ դրա տակ—«Որբունութիւն ա-
րեւմտեան անտուն անտէր որբունի»: Որբ-
ունութիւն հայոց այդ պատկերազարդ «Բազմա-
վէպ» գեղեցիկ տպարանութիւն է գործում
նախ եւ առաջ իր արտաքինով: Ինչպէս յայտ-
նի է, մեր մէջ գեղարուեստական հրատարա-
կութիւնների գաղափարն էլ ցերեպով ու
ապականված է զանազան շարժիչների ձեռքով
որոնք յանդիման են նոյն իսկ ամեն մի ճաշակ
փչացնող գործն էլ չուկայ հանել մանրակա-
նաւորների գոգապանքներով: Ապահովակէս կա-
րող ենք ասել, որ վերջին տասնեակ տարիներ
ուսումնասիրութեան մէջ մեր մէջ երեւան եկած լինի
այնքան մի չքեղ գործ, որպիսին է Վենետիկի
այս հրատարակութիւնը: Բարձր տեսակի ազ-

նիւ հաստ թուղթ, մաքուր տպագրութիւն,
բազմաթիւ պատկերներ—առաջին է տուել Ս.
Ղազարի վանքը՝ հայ որբունների համար կո-
պէկներ հաւաքելու նպատակով: Միակ նկա-
տողութիւնը, որ կարելի է անել այս հրա-
տարակութեան վերաբերմամբ, այն է, որ տա-
ռերը չափազանց մանր են. բայց առհասա-
րակ հայ տպարանին երկինքը չէ ողորմութիւն
արել տառերի հարատւութեան կողմից. ինչ ար-
վել է մեզանից 40—50 տարի առաջ Պարզում
խմբած մի քանի հայերի ձեռքով, նոյնը, այն
էլ ոչ ամբողջովին, այլ կիսատ—պատ, կազ-
մում է մեր տպարանական հարստութիւնը:
Այսքանը արտաքինի մասին: Գրական մասը
սկսվում է մի յօդուածով, որի մէջ խմբագրու-
թիւնը ուզում է շարժել քար-տարեր:

Ո՞ն ինչ տխուր եւ որքան սրտածախի է
հայ որբերը. կու լայ նա, բայց չունի հայր,
որ արցունքները արեւ, չունի մայր, որ տաք
համբոյր մը տայ անոր խնձոր երեսին: Ծած-
կոց մը՝ պատուած է կարկատուն՝ վրան
առած, կը գոցէ իր մարմինը դողդոջուն. ան՝
իրեն ցուրտին ու ձիւնին կը լինի խանձա-
րուր եւ վերակ գիշերային. ան է իրեն
խրճիթը, որուն մէջ կ'ընկնէ, կ'երգէ նա գի-
շերները. եւ երգին է իրեն միակ սփոփանքը,
այն ատեն որ չէ նա. կը տեսնէ մայրը, որ
իր կուրծքին վրայ կը սեղմէ գինքը. կը տեսնէ
հայրը, որուն ծնկան վրայ տաքուկ սիրտը,
գգունաց եւ պաշտիկներով կարծանալու
ի՞նչ երջանիկ վայրկեան, եւ ժամանակ նա-
խանձելի, բայց որքան կարճատեւ: Դեռ
արշալոյսն չի ցափած, անօթութիւնը կը
լսողէ խեղճ որբունին խաղաղ նինջը. ար-
թնցած է նա չուտով, եւ վայելքը անմասն
արդէն թուր է: Անտառախիտ մութ մազերուն
մէջ կը ճառագայթէ լուսնակ երեսը, բայց
մաղձոտ ու չուարած խոշոր աչուրները դե-
պի երկինք տնկած, «Անօթի» եւ, պատու մը
հայը կը գոչէ:—Այս է հայ որբունին կեան-
քը եւ այս անոր հանապազօր վիճակը: Իրեն
համար չէ ամառուան անոյգ գեղիւնը, իրեն
համար չէ թռչնոց ջրային ձուռնոցները, իրեն
համար չէ գեղեցիկ մարգագետինը, պայծառ
երկինքը, ծաղկանց բույրը, բնութեան ժպիտն,
գեղեցիկ պատկերներն: Տանք իրեն այդ ա-
մենը, բայց նա կը միմիկ զանգը. տուր
ինձ մայրս, կը գոչէ, թէ չես կարող, պատու
մը հայ նման ինձի: Եւ այդ է հայ որբունին
խնդրը: Դ՛հ, կ'ընէ որբունին տալ իր մայ-
րը անհաւանի է, միմիկ եւ անկարելի է պա-
տու մը հայ երկնցնել անոր քաղցած բերա-

—Թակուր ջան, քնիւր, ապաց նա, անպա-
տասխան թողնելով իմ հարցերը:

Ապա եւ լեցի, թէ ինչպէս հարեւան կտրի
վրա մի փոքրիկ երեխայ ճալ ախցի, մայրն
աշխատում էր հանգստացնել, բայց երեխան
անկողնի մէջէն էր. եւ տեսայ ինչպէս մայրս
վերկայաւ, հարցրեց թէ ինչ է եղել:

—Կարիճը ձեռքը կ'ընէ, եղաւ պատասխանը:

—Անտէր մնայ կարիճը, ասաց մայրս. ձեռքը

ստոր մաճի մէջ դրէ՞ք:

Եւ տեսայ, թէ ինչպէս այնտեղ՝ հարեւան
կտրի վրա մի քանիսն այս ու այն կողմն ըն-
կած, ճրագը ձեռներին, անկողններին տակ կա-
րիճն են փնտրում, ուրիշները երեխային են
հանգստացնում: Ապա նորից սկսեցին ասողով
րին նայել... Թակուրը հեռու արեւմուտքում
մի աստիկի վառվեց, լայն արձակեց, ցոլաց ի-
ջաւ դէպի հորիզոնը. եւ հետեւում էր նրան
եւ աչքերս տարվեցին...

II

Ուշ գիշեր էր, երբ եւ յանկարծ վեր թռայ
անասելի տարուկից, դարձեալ նաւ. Մովսիկը
եւ տեսայ, թէ ինչպէս մայրս դողդոջալով կա-
ցել էր մեր երկուսի վրա եւ մի ձեռքով ինձ էր
գրկել, միւսով քրոջս, ասես մեզ պաշտպա-
նում էր, որ չը խնէ, չը տանեն: Գիւղում՝
կտուրների վրա, բակերում, փողոցներում,
գիւղից դուրս, այգիների ճանապարհներում,
նոյն իսկ հեռուոր դաշտերում աղմուկն ան-
նկարագրելի էր: Կանաչ լայ էին լինում, ե-
րեխաները օտարաբան ձայն էին, տղամարդիկ
վազվազում էին այս ու այն կողմ: Ումանք գո-
ռում էին՝ «տարաւ, տարաւ», ուրիշները՝ «ե-
կանք, եկանք», իսկ մէկը շատ հեռուից կան-
չում էր՝ «հաւաք, հաւաք», մերթ ընդ
մերթ լսվում էր մի հատիկ հրացանի ձայն

այդ տեսակետից: Սակայն ցաւում ենք, որ զանազան մոլթ եւ անգրագէտ անձանց կողմից լրագրողներու հերքումներն կամ այլ միտումներ նամակներ տպագրել տալը պէտք է նմանվի նոյն տեսակ անձնատրուներին կողմից զանազան ժողովուրդներին կամ փողոցային արդարադատներին կեանքային խնդիրներ փողով գրել տալուն: Մենք համոզված ենք, որ մեր մէջ չի գտնուի մի իսկական ինստիտուցիոն ժողով, որ փողով անդարձեցնէ հերքումներ գրէ, իսկ արտոգոյններ թող մտնեն, դա այնքան էլ ցաւ չէ: Մենք հաշտվում ենք այդ ցաւալի իրողութեան հետ, քանի որ լրագրողները հասարակական օրգան, պարտաւոր է տեղ տալ թեր եւ դէմ կարծիքներին, մինչեւ որ ճշմարտութիւնը պարզվի: Հիմա գտնեք բուն ինքրին:

«Մշակի» անցեալ տարվայ № 49-ում արձանագրված վախճանական խոշոր փաստերից մի երեքը իրան վրա վերցրեց այս տարվայ «Մշակի» № 145-ում տպագրված նամակի տակ ստորագրողը: Ինչի ախ ժամանակ դուրս չեկաւ եւ չը հերքեց լրագրում, քանի որ ամբողջ քաղաքին եւ գաւառին յայտնի էին այդ փաստերը, եւ ինքը ընդունում էր, որ իրան եւ վերաբերվում Այդ փաստերը ինձ հաղորդել էին գիւղացիները բազմաթիւ վկաների ներկայութեամբ: Ապա այդ փաստերից մէկի վերաբերմամբ դատ սկսվեց այդ ստորագրողի դէմ, որի առթիւ «Մշակի» թղթակիցներին մէկը, պ. Զաւարիցյան, նորից, համարեա նոյնութեամբ, բայց աւելի ընդարձակ կերպով, արձանագրել է այդ փաստը «Մշակի» այս տարվայ № 83-ում: Ինչի ախ պ. ստորագրողը իր ժամանակին չը հերքեց պ. Զաւարիցյանը գրածը:

«Մշակի» այս տարվայ № 129-ում մի լուր կար տպված, թէ Յակոբ Մարգարով զրպարտել էր Յովհաննէս Դարբինսնին, սա էլ գտնադատվել էր նրա դէմ. դատաւորը վճռեց Մարգարովին ենթարկել նախնական բանտարկման, սակայն նա երաշխաւորութեամբ առ այժմ զատկեց բանտարկութենից: Մարգարով «Մշակի» № 145-ում այսպէս է հերքում այդ պարզ լուրը. «Իսկ ամեն 5-ին քննվող գործը պ. Դարբինսնին հետ այն էր, որ ես զրպարտել էի նրան, համարելով Շահնազարհանին «գործող» իմ դէմ, վերադառնալ (միթէ վերադառնալ) նրանով, որ ինձ դատարանը երաշխաւորութեամբ թողեց, չը նայած որ դատարանի այդ որոշումն (պարզ հասկացվում է) երաշխաւորութեամբ թողնելը անօրինակ էր: Միթէ ձեր լրատունն ուրիշ չէր գրել, ի հարկէ, առանց անմիտ օրախոսքի: Ապա Մարգարովի նամակագիրը պատմում է մի ինչ որ գործի մասին, որ ամենին չի վերաբերում № 129-ում տպված լուրին: Ձեր թղթակիցը պարտական է իր համոզմունքի հաւատակ բան գրելու, մասնաւորապէս որ բացակայ է եղել այդ գործի քննութեան ժամանակ եւ չը գիտէ, թէ Մարգարով ինչ ձեւով եւ միջոցներով է արդարեւ Ուրեմն նամակագրի նպատակը եղել է ոչ թէ հերքել № 129-ի այն լուրը, որ ինքն եւս հաստատում է, այլ պատմել մի ինչ որ դատական գործի մասին, որ անյայտ է եղել մեր թղթակցին: Հերքումները, գլխաւորապէս, նշանակութիւն ունեն այն հասարակութեան համար, որի մէջ ապրել կամ, լաւ թէ վատ, գործել է մեղադրվողը: Այդ տեսակէտից էլ աւելորդ բան է այս հերքումը, քանի որ Արաքսյալքի եւ գաւառի 60 հազար հայ ժողովուրդը լաւ ճանաչում է հերքումի տակ ստորագրողին: Վերջը նամակագիրը խորհտարով ասում է. «Ես երբեք իմ կենսական վախճանական գործի մէջ մեղադրված չեմ եղել»: Այս մէկը զուտ ճշմարտութիւն է: Եւ ինչեւ հիմա չեք մեղադրվել, բայց հիմա մարդիկ մեղադրվում են. ժամանակները շատ են վատացել:

Ես աշխատում եմ, որ իմ թղթակցութիւնները զուտ հասարակական բնաւորութիւն կրեն. թէեւ սխալներ, ի հարկէ, կարող են սպրդել, բայց յամենայն դէպս ես ամեն մի լրան իմ թղթակցութիւններին մէջ աւելի ծիշել եմ արձանագրում: քան զանազան հերքողները իրանց սեփական ձեռքով կարողանում են գրել իրանց անունն ու ազգանունը...

Սալլիւմեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Նաւթահանքերում գործող մասնագէտներին մասին միջնորդներին կոմիտէտը կայացրեց հեռաւար որոշումը: Թոյլ է տրվում ժամանակահատը կերպով, որ տեխնիկական բարձր կըրթութիւն օտարած անձինք նշանակվեն գործարանների ղեկավարներ առանց հարցաքննվելու. իսկ այն անձինք, որոնք չունեն բարձր կրթական պատրաստութիւն, կարող են մնալ իրանց պաշտօններում մինչեւ առաջիկայ 1901 թ-ի յուլիսը:

«Приазовский Край» լրագիրը հաղորդում է, որ հոկտեմբերի 6-ին ձիւնը բոլորովին հալվել է Կովկասեան լեռնաշղթայի ամենամեծ հսկայի, Էլբորուսի երկու գագաթներից մէկի վրա, իր բան, որ մինչեւ այժմ երբեք չէ նկատված: Այդ եւ ուրիշ նշաններ, որոնք նշանակվել են նոյն օրը առեթի մի տալիս կարծեւ, թէ տեղի

է ունեցել թեթեւ հրաբխային երեւոյթ: Հեռաւար օրը գագաթը նորից ծածկվել է ձիւնով:

«Россия» լրագիրը հաղորդում է, որ անհիմն է այն լուրը, թէ, պետական գանձարանի նեղ վիճակի պատճառով, կրճատվում է զանազան պետական հաստատութիւնների մէջ ծառայողների թիւը: Ժիշդ է միայն այն, որ ֆինանսների մինիստրութիւնը եւ պետական կոնտրոլը մեծ կրճատումներ են անում նախահաշիւների մէջ նոր ծախսերի համար խնդրվող գումարներում եւ մերժում են ծառայողների թիւը աւելացնել առաջարկող ծրագիրները: Ինչ վերաբերում է այն ծախսերին, որոնք առաջ կատարվում էին օրէնքի պահանջով համաձայն, նրանք այժմ էլ կատարվելու են առաջվայ չափով:

Երեքշաբթի, հոկտեմբերի 17-ին, Դալսկուդրամատիական խումբը ներկայացրեց Օստրովսկու «Женитьба Вильгельма» պիեսը, որի մէջ Անդրէյի գլխաւոր դերը կատարում էր ինքը Դալսկու: Այս պիեսում Դալսկու հանդէս բերեց ուսու վաճառական դասակարգին պատկանող երիտասարդ Անդրէյի տիպը ընտրել կերպով: Տիպը հարազատ էր եւ դերասանը կարողացաւ հանդէս բերել ամբողջացած մի բնաւորութիւն: Առանձնապէս տպաւորութիւն գործեց չորրորդ գործողութեան վերջին տեսարանը, ուր Անդրէյ խօսում է Երեւոյի հետ այն խայտառակ դրութեան մասին, որ առաջ է եկել Երեւոյի նորոգել: Տիպական էին Անդրէյի ծնողները, իրեն հին սերնդի ուսու վաճառականներ:

Ռուսաց կայսերական աշխարհագրական ընկերութիւնը նորից օժանդակիչ անդամ (Членъ-сопребыватель) է ընտրել պ. Ա. Մանթշեանին, որ 1,500 ռուբլի է նուիրել ընկերութեան: Կովկասում հինգ հատ երկրաչափագիտական կայարաններ հիմնելու համար:

«Киевская Газета» լրագիրը հաղորդում է, թէ Կիևի համալսարանից արձակված են 84 բժիշկ-ուսանողներ (16 առաջին կուրսից եւ 68 երկրորդից), որովհետեւ չեն կարողացել աւելի ընդլայնել կրթական քննութիւնները: Որքան մեղ յայտնի է, այդ առաջին դէպքն է ուսուցիչ համալսարանների ամբողջ գոյութեան ընթացքում, որ այդքան ուսանողներ են արձակվում անաջող քննութիւնների պատճառով:

Հոկտեմբերի 14-ին Պետերբուրգից հաղորդում են «Рус. Вѣд.» լրագրին. «Այսօր Պետերբուրգը վաղ առաւօտից ծածկված է սարսափելի մառախուղով. 3—4 քայլ հեռու ոչինչ չէ կարելի ջոկել: Այս մառախուղի հետեւանքն այն եղաւ, որ Բալտեան երկաթուղու վրա տեղի ունեցաւ զարհուրելի աղետ: Օրանիէն բառումից եկող գնացքը ընդհարվեց մի այլ մարդատար գնացքի հետ, որ կանգնած էր պահեստի ճանապարհի վրա եւ ջարդուփշուր արեց բազմաթիւ վազոններ: Զանապարհորդները մընացին փչրված վազոնների կոյտերի տակ: Աւայժմ յայտնի է, որ 4 մարդ սպանված են, իսկ տասնաւոր մարդիկ ստացել են ծանր վէրքեր: Վարչականի երկաթուղային գծի վրա եւս տեղի ունեցաւ գնացքի խորտակումը:

Միջնաւորների մինիստրութեան արդիւնագործութեան բաժինը բացատրեց, թէ գիւղացիների ջրաղացները չեն ենթարկվում պետական արդիւնագրական տուրքի, եթէ նրանք չհաւգործվում են տէրերի անմիջական աշխատանքով եւ ունեն ոչ աւելի քան չորս հատ ջրաղացներ: Կամ մի վայրի գործիք. այդ ջրաղացներում կազմվող հատիկների քանակութիւնը չէ սահմանափակվում ոչ մի չափով: Ներառեց իրաւունք ունեն աղալ այնքան հատիկներ, որքան միայն կարող են:

«Русский Турестанъ» լրագիրը հաղորդում է, թէ Տաշկենտի մոտակայքում գտնվող Նի-կուլսի գիւղի բնակիչները որոշել են հիմնել գիւղացիների փոխադարձ օգնութեան ընկերութիւն: Ընկերութեան գլխաւոր նպատակն է լինելու օգնել նեղ դրութեան մէջ ընկած անդամներին, փոխ տալով դրամ ու գանազան միջոցներ, եւ աշխատանք գտնել աշխատանք փնտրող անդամներին համար, վկայական տալով գիւղացիների վարչութեան անունից նրանց բարոյականութեան եւ հատուկեան մասին: Այդ նոր ընկերութեան կանոնադրութեան նախա-

գիծը չուտով քննվելու է թուրքեստանեան գիւղատնտեսական ընկերութեան մէջ:

«Курьеръ» լրագիրը հաղորդում է մի լուր, որ բնորոշում է «ուսու երկրի մեծ գործը»: Լ. Տօլստոյի վերաբերմամբ դէպի երիտասարդ ուսու տաղանդներից այժմ ամենածոգովորդականը, Մակսիմ Գորկին: Նորից վերջինը այցելել է Կոմսին իր կալուածքում, Եւստայա Պօլեանայ յուսակարել է նրանց երկուսին միասին «չքաւարների ծառի» տակ:

«Сѣв. Курьеръ» լրագիրը հաղորդում է, թէ այս աշնանային կրթամեակում Ս.-Պետերբուրգի համալսարանում պրօֆէսոր Պ. Վ. Կովալսկիի դասախօսութիւններ է կարգում «արեւոյդութեան» մասին: Հոկտեմբերի 12-ին համալսարանի հանդիսարանում խոսված է եղել անագին բազմութիւն բոլոր բաժանմունքների ուսանողներից լսելու համար յայտնի պրօֆէսորի առաջին դասախօսութիւնը այդ հետաքրքրական հարցի մասին: Դասախօսը բացատրել է ունիդիւրներին այն բազմութիւն եւ անագին վիճակները, որ հասցնում է արեւոյդութիւնը ընտանիքին, հասարակութեան եւ պետութեան: Հետեւեալ դասախօսութիւնների մէջ պրօֆէսոր Կովալսկիի խօսելու է այն միջոցների մասին, որ պէտք է ձեռք առնեն մասնաւոր անհատները, հասարակութիւնը եւ ամբողջ պետութիւնները այդ սոսկալի չարքի դէմ մաքաւելու համար:

Հոկտեմբերի 14-ին Պետերբուրգում երրորդ անգամ աճուրդի հանվելուց յետոյ՝ վերջապէս ծախվեցին «Сынъ Отечества» լրագիրը եւ «Живописное Обозрѣніе» շաբաթաթերթը: «Сынъ Отечества»-ն գնեց Ա. Բալագուսկի, իսկ «Живописное Обозрѣніе»-ն՝ մի ոմն վաճառական Սարատով: Թէ լրագիրը եւ թէ շաբաթաթերթը ծախվեցին չնչին գներով:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՍԱՀԱՆԱՆ ԼՐԱԳԻՐՆԵՐԻ ԿԱՐԾԻՔԸ ԱՆԳԼՈՒԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԶԱՅԻՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն այն տեղեկութիւնների, որ ստացել է Լոնդոնից Նիւ-Իորկի «Sun» լրագիրը, անգլո-գերմանական համաձայնութիւնը աւելի կարեւոր նշանակութիւն ունի, քան կարելի էր ենթադրել առաջին անգամ՝ նայելով այն ձեւին, որով խմբագրված է համաձայնութիւնը: «Սամայի» եւ արեւմտեան Աֆրիկայի վերաբերմամբ կայացած համաձայնութեան օրինակ սկսած—ասում է «Sun»—Անգլիայի եւ Գերմանիայի մէջ սերտ միութիւն է տիրում Լօրդ Սօլսբերիին այն ժամանակ զիջեց Գերմանիայի ցարկութեան, որ փայտկալում էր նա 30 տարեկան ընթացքում Անգլիայի հետ դաշն կապելու վերաբերմամբ Սօլսբերիին այդ միջոցով կամենում էր ազատ կացուցանել իր երկիրը եւրոպական միջամտութիւնից հարաւ-արեւմտեան պատերազմի ժամանակ: Դաշնակցութիւնը միայն պաշտպանողական բնաւորութիւն չէ կրում: Փրանսիական եւ ուսական կառավարութիւնները, ըստ երեւոյթին, գիտէին այդ դաշնակցութեան գոյութեան մասին, բայց դաշնագիրը աւելի լիակատար եւ ընդհանուր է, քան ենթադրում էին Պարիզում եւ Պետերբուրգում: «Sun» լրագիրը յայտնում է, թէ այդ դաշնակցութիւնը, որ վերջին 30 տարեկան ամենակարեւոր քաղաքական դէպքն է, նպատակ ունի պահպանել խաղաղութիւնը. նա ամբողջով, գուցէ եւ տարիներով, կը յետաձգէ պայանացող ընդհանուր պատերազմը: Ամերիկայում պաշտօնական կերպով յայտնված է, որ Միացեալ-Նահանգների կառավարութիւնը չի միանայ անգլո-գերմանական դաշնակցութեան:

«Daily News»-ի Բերլինի թղթակիցը գրում է անգլո-գերմանական համաձայնութեան մասին. «Այստեղ բացարձակապէս յայտնում են, որ համաձայնութեան 3-րդ օրը յօդուածը կարող է իրագործվել միայն այն դէպքում, երբ մի որ եւ պետութիւն հողային գրաւումներ անէ: Ձիւնաւորներից, բայց ոչ այն դէպքում, երբ այդ պետութիւնը հրաժարվի միանալ «բաց դռների» քաղաքականութեանը: Գերմանական իշխանութիւնները դրականապէս պնդում են, թէ ոչ մի ուրիշ գաղտնի դաշնագրութիւն չի կայ Անգլիայի եւ Գերմանիայի միջեւ: Եւ հաճութեամբ հաւատում են այդ պնդումներին. բայց մի եւ նոյն ժամանակ հաստատ հաւատացած են, որ մի ուրիշ գաղտնի համաձայնութիւն կայ Գերմանիայի եւ Ռուս-

սաստանի մէջ, որ այս պետութիւններից առաջինին պարտաւորեցնում է չը խառնվել Ռուսաստանի շահերի մէջ հիւսիսային Ձիւնաստանում եւ գործունէութեան ազատ ասպարէզ տալ նրան: Այսպիսի խոստումն չէր հակասի անգլո-գերմանական համաձայնութեան, որովհետեւ Ռուսաստանը կարող է պաշտօնական ձեւ չը տալ իր գրաւումներին, բայց մի եւ նոյն ժամանակ հաստատապէս ամրանալ Մանջուրիայում: Այսպիսով անգլո-գերմանական համաձայնութիւնը Գերմանիայի համար կը լինէր մէկը այն կրկնակի ապահովացման դաշնագրերից, որոնց այնպէս սիրահար են գերմանացիները:

«Observer» նկատում է, որ եթէ բոլոր միւս պետութիւնները միանային անգլո-գերմանական համաձայնութեան, այն ժամանակ հեռաւոր արեւելքի այժմեան ճգնաժամը զգալի կերպով կարելի կը լինէր թեթեւացնել:

«St. James Gazette», անգլիական պալատական շրջանների օրգանը, գրում է. «Այս դաշնագիրը մեծ նշանակութիւն ունի եւ մի նոր ապացոյց է, որ նրան կապող պետութիւնները սերտ յարաբերութիւններ մէջ են միմեանց հետ: Այսուամենայնիւ պէտք է ցաւել, որ համաձայնութիւնը ի նկատի չունի հարցի մի ամենակարեւոր կողմը—յանցաւոր պաշտօնեաներին պատժելու խնդիրը: Որովհետեւ Ռուսաստանն եւ Ֆրանսիան դեռ Անգլիայից ու Գերմանիայից առաջ յայտնել են, որ դէմ են Ձիւնաստանում երկիրներ գրաւելու քաղաքականութեանը, ուրեմն դուրս է գալիս, իսկապէս, որ չինական հարցի ամենազրկաւոր կէտի վերաբերմամբ բոլոր պետութիւնների մէջ լիակատար համաձայնութիւն կայ:

«Central News» հաւատացնում է, թէ Ռուսաստանը եւ Իտալիան անգլո-գերմանական դաշնակցութեան առթիւ յայտնեցին իրանց հաւանութիւնը: Անգլիական արտաքին գործերի մինիստրութիւնը ոչ մի առարկութիւն չէ ապստում չահագործված պետութիւնների կողմից, որովհետեւ բանակցութիւնների ժամանակ մարկիզ Սօլսբերի խորհուրդ է հարցրել բոլոր պետութիւններից:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Թէ որպիսի անհու հարստութիւն են պարտնակում իրանց մէջ Թիւրքիայի իշխանութեան տակ գտնվող երկիրները՝ այդ ցոյց են տալիս վերջին ժամանակներում գերմանացի մի խումբ անտեսագէտների կողմից կատարված հետազոտութիւնները Թիւրքիայի անտառային հարստութեան վերաբերմամբ Հետազոտութիւնը կատարված է գերմանական կառավարութեան նախաձեռնութեամբ. նա պարզել է, որ եւրոպական եւ ասիական Թիւրքիայի բոլոր անտառների տարածութիւնը հաւասար է 12,000,000 հեկտարի: Հետազոտութիւնը տպագրուել է, որ Թիւրքիայի անտառները Լիւանի լեռներում եւ Տրապիզոնի վկայելով իրանց չափերով եւ խտութեամբ գերազանց են Ալպան, Բոհեմական, Չայքոբուրգի եւ Փոքր-Կարպատեան անտառներից: Միայն վերջածո: Լիւանի անտառները լի են մայր-ծառերով, որոնցից փնտրելիքները նաեւ էին չինուս: Միջերկրական ծովի ափերում տարածվում են կաղնու, նշտարեւու, սօսնու, արմաւնու եւ լորենու հսկայական անտառներ: Ամբողջ Թիւրքական արկիկայից ծածկված է ձիթապղտի, կիտրոնի եւ նարինջի ծառերով: Ալքանիայի լեռները եւ Ռուսիայի հիւսիսային շրջանները, ինչպէս եւ Մեծ ու Փոքր Բալկանների անտառները հարուստ են չինութեան եւ վառետառները ամենատեսակ փայտեղէնով: Բրուսսայի, Դիարբեքի, Մամուլու-Ալգիւի, Վանի, Բիթլիսի, Էրզրումի, Ադանայի, Ալգիւի վկայելով ներքեւ Գորդաւանի լեռները, գերմանացի գիտնականները կարծեցով, կարող են անսահման ժամանակով պահպանել թափաքաղաքի Եւրօպայի 2/3 մասին. իսկ Թիւրքիայի արմաւենու անտառները կարող են բաւարարութիւն տալ աշխարհի բոլոր փորագրիչներին հարկաւոր տարիներ ընթացքում: Թիւրքական լրագրողների տեսլով գերմանական կառավարութիւնը մտադրել է բանակցութիւններ սկսել Թիւրքիայի հետ՝ նրանից անտառներ կապալով վերցնելու եւ վերցրած անտառները դիւրութեամբ շահագործելու համար՝ կարեւոր տեղերում երկաթուղիներ անցկացնելու վերաբերութեամբ:

—Պօզնանից հոկտեմբերի 22-ին (ն. տ.) հաղորդում են «С. П. Вѣд.» լրագրին, որ այնտեղ է գնացել դաւանութիւնների եւ ժողովրդական լուսաւորութեան պրոպագանդա միջոցառող Պօզնանի տեղական իշխանութիւնների հետ խորհելու համար, թէ ինչ նոր միջոցներ պէտք է ձեռք առնվեն ընկի լեռնազանալութիւնը գերմանացիներ վերաբերմամբ: Հաւաստի աղբիւրներից հաղորդում են, որ ենթադրութեան կայ Պրոպագանդայի սահմաններում գոյութիւն ունեցող լեռնային պարբերական թերթերի թիւը կրճատվելու եւ ապա, հանգամանքներին նայելով, բոլորովին դադարեցնել

Типографія Грузинск. Т—ва, Большая-Валковская ул., № 27.